43. ՔԱՎՈՐՆ ՈՒ ՍԱՆԵՐԸ

Ժամանակով հարուստում կ'ըլլի, էդիկ շատ հարուստ կ'ըլլի էդ գեղի մեջը, որ քալողը ագոր կը կանչի տուն քավորութան։

Տարիմ, էրկու ժամանկոնց կանցնի վրեն, էդոր գործը ձախորթութան կ'էրթա, հետզհետե մալեն գընկնի, կ'ֆուխարանա կը մարթը։ Էվել որ էդոր հետ խոնըղմիշ ընողները է'լ էդոր էրեսն աշել չեն։ Հար ում քով կէրթա իսե բարև կուտա, բարև չեն առներ գը, դառնա փորփոշման տունը գուքա տյուշումիշ էղնելով։

Էկավ տուն հասավ, իրեն կնիկն ըսավ թե.— Էրիկ մարթ, ի՞նչ տյուշումիշ կէղնիս։

Էրիկն ըսավ թե.— Ես տյուշումիշ չէղնիմ, վե՞վ էղնի։

Կընիկն ըսավ թե.— Ինչո՞ւ համար, մա՛րթ։

— Ինոր համար է թե,— ըսավ մարթ,— քանի որ զանգին էի, տանեին կուտեցնեին, խմցնեին, պատվեին գը, հիմա որ յողսուղության ընկանք, չոր պարևներս կուտանք չեն առնիր բիլե, էրեսներս աշիլ չին, էդոր վրա տյուշումիշ կէղնիմ ես էլ։

Կընիկն ըսավ թե.— Իդոր համար թալաշ մ'էնի։ Ասված օղորմած է, տվողն ասված կարող է տալ։

Տարիմ անցավ իդոր վրեն, կնիկը ծանդր ոտք էր, պառկավ ծննդկանի, տղեմ էղավ։

Հինգ տասն օր անցավ էդ տղի վերեն, քավորներուն վերին ըսավ իսե չէկան տղեն քրկելու։ Էդոր տղեն անկնունք մնաց էդպես։

Էկավ իրեն տունը էդ մարթ ըսավ.— Կնիկ, էվել օր զենդին էինք հետ ում օր կըսեինք՝ կուքային մեր տղեքը քրկեին կը, հիմա օր ֆուխարացանք՝ հետ ում օր կըսենք չեն քա մեր տղեն քրկե, աշենք թե մեր սոնը ասված ինչ կը կամենա։

Աստվածուքուն, տեր աշեց որ էդոր տղեն անկնունք մնաց, Գափրել հրեշտակին ղրկեց էկավ քավոր էղնի։

Գափրել հրեշտակն էկավ էդոր տուն մտավ, ըսավ.— Բարև՝ ախպեր քեզ,— ըսավ։

— Ասսու բարին քեզ ալ,— ըսավ։

— Ախպեր ինձի միսաֆըր չե՞ս էնի էսօր,— ըսավ։

— Ինչո՞ւ չեմ ըներ ախպեր շան, հանե օտներդ, արի նստի։

Մուքն ընկավ, բերեց հաց դրեց էդ մարթուն, իրար հետ նըստան ու կերան։ Քիչ ետև Գափրել հրեշտակը աշեց օր էդ մարթը տյուշումիշ կ'էղնի, էդոր ըսավ թե.

— Ախպե՛ր ինչո՞ւ տյուշումիշ կէղնիս, դարդդ իմանանք։

— Դարդս իմանա՞ս պիտի,— ըսավ,— էվել ես շատ զենդին էի, հիմա ֆուխարացեր եմ, մե տղեմ ունիմ, անկնունք մնացեր է համա, էղավ իրեք ամիս, հար ում օր ըսի իմ տղեն չքրկեց, էդոր վերեն տյուշումիշ կ'էղնիմ։

Գափրել հրեշտակն ըսավ թե.— Ընձի չե՞ս էնի քավոր, ես սաբախտան քու տղեդ քրկեմ գը։

Մարթն ըսավ.— Ինչո՞ւ չեմ ընե, դու օր քավոր կէղնիս, ես էլ քավոր կէնեմ քեզի։

Սաբախտան էղավ, էդ մարթ գնաց տերտերին ետևը, տերտերին առավ էկավ։ Տղեն առավ Գափրել հրեշտակ քիրկը, առավ, տարան ժամ։

Տղեն էնտեղ կնքեց տերտերը, առան էկան, բերին տունը։ Տերտերն ըրթալեն վերչ՝ մնացին քավորն ու սաները։

Քավորն ըսավ թե.— Սանե՛ր, էկի քեզի արեստուքյունըմ տամ։

— Ի՞նչ արեստուքյուն պիտի տաս ինձի, ես ինչ գիտեմ որ ինձի արեստուքյուն տաս։

Քավորն ըսավ.— Քու ինչո՞ւդ է, ես քեզի ի՞նչ կ'ըսեմ, դու էն էրա։

Սաներն ըսավ.— Դե՛, ըսա տեսնամ ես ի՞նչ պիտի էնեմ։

Քավորն ըսավ.— Մեկ շիշեմ ջուր կը լլես, կ'ըսես «հեքիմ եմ» ու ժուռ գուքաս գեղանները։

Ըսավ թե.— Հա՛, գնացի, ես ի՞նչ պիտի էնեմ։

— Տու հար վեր հիվնդի քովն էրթաս, հոն տեղ ես գտնվիմ գը,

օր դուքաս կաշես օր ես հոն եմ, թե՛ հիվնդի վերի թին եմ իսկ, էնոր գեղ չես տա, աշեցի՛ր, թե օտներու թարաֆն եմ կայնե, մոտենաս դեղը կուտաս շիշով ու էն կը լավնա ասծու իշնով։

Էտիկ հեքիմ մ'էղավ արթըխ, ընկավ էն դեղաններու մեջը «հեքիմ եմ» ըսավ ու ժուռ էկավ։ Էդիկ լավ հեքիմ մ'էղավ, էմալ հարստացավ, օր էվալվա հարստութունը քտավ։

Օրվա մեկը թագավորի տղեն շատ նեղած հիվանդ կ'էղնի։

Կ'ըսեն.— Ֆիլան տեղը լավ հեքիմըմ կա, ղրկենք էդոր ետևը։

Գուքան էդոր տանին կը։

Էդ հեքիմ գնաց ու էդ հիվնդի տուն հասավ։ Մտավ նես, տարան հիվնդի քով։ Մտավ նե, աշեց օր քավորը գլխու վերի թին է։

Թագավորն ըսավ թե.— Հեքի՛մ, օր տղես լավցընես քու ծանդրութունովը օսկի քեղի կուտամ։

Հեքիմն իմացավ էղքան փարա պիտի տա թագավորը, աշեց քավորն գլխու վերի թին կայներ է, ի՞նչըն պիտի լավցընե հիմա։ Սաներ բաշլայեց յալվար ընկնել քավորին, ըսավ.

— Քավոր, քու բախտդ եմ ընկե, դու գիտես, էկի հոքին մի առնե, ես էդոր լավցընեմ, փարեն առնիմ գը։

Քավորն ըսավ.— Էդման պան չէղնի։

Հեքիմն ըսավ.— Տու դիտես արթըխ, բախտդ եմ ընկե։

Գափրել հրեշտակը աշեց օր շատ յալվար կ'ընկնի էդ փարի համար, ըսավ.— Օր էդպես է, հիվնդի գլուխը տար քու թարաֆ, օտները բեր իմ թարաֆ ու դեղը տո՛ւր արթըխ։

Հեքիմ հիվնդի գլուխը դառուց իրան թարաֆ, օտները հրեշտակին թարաֆը։ Մոտեցավ շիշով դեղը կաթեցուց բերանը։ Դեղը տվեց քիմի, հիվանդը ելավ տեղի մեջը նստավ ու բոլորն աշեց.

— Էս ի՛նչ էսման թուփ եք եղե իմ բոլորս, ի՞նչ էղերի ընձի օր գուլաք, փառք աստծու օր սա՛ղ եմ։

— Դու մեռնելու հիվանդ էիր, հոքու հետ էիր, էս հեքիմն հասավ էվել աստուծով լավցուց,— ըսին։

Էդիկ լավցնելու վերջ, հեքիմին տարավ թագավորը խաղնա օդեն, կշեռքի մեկ թարաֆը ինքը մտավ, մեկ թարաֆը օսկի լեցուց, իրա ծանդրութունով կշռեց օսկին տվեց։ Կանչեց իրա մեկ մշկին մեկ ձիմ տվեց, հեքիմի օսկին բառցան ձիուն։ Հեքիմը, մշակը, քավոր, ելան ընկան ճամբա, գնացին հասան հեքիմի տունը։ Թագավորի մշկին ճամբու դրին, մնացին հիմա քավորն ու սաները։

Քավորն աշեց որ, սաներն էմալ հարուստացավ ավալքվա հա-

ըստութան էրկուքը էղավ, էլի էսիկ աշխարքի մալեն չի կշտանա տհա։ Հեչ միտքը չի բերե, աշե օր մեռնել կա էս աշխարքը։

— Քավորն ըսավ թե.— Սանե՛ր, քելե էրթանք քեզ հետ մե տեղ ժուռ քալու։

Ելան ու գնացին էդոնք։

Կնացին դուրան, զարթարուն տեղըմ, էնտեղ մե դուռըմ բացեց քավորը, մտան նե, մտան նե, սաները տեսավ, օր էնպես զարթարուն տեղ է՝ մոմերը կը վառին ալախաշխաշի պես՝ վերը նոր է սկսե վառելը, վերն է վառե կես է էղե, վերն է արթըխ շամտընին հասե էղե, մլմլա կը։

Սաներն ըսավ.— Քավոր, էս ի՞նչ բան է, էս ի՞նչ զարթուն է, մեկ ընձի պատմե։

— Աշխարի զարթուքան տեղն էսի՛կ է,— ըսավ քավորը։

— Ինչպե՞ս աշխարի զարթուքուն է,— ըսավ սաները։

— Էնպես օր,— ըսավ քավոր,— էն օր նոր կը վառին՝ էնիկ նոր էղած տղեն է, մորեն նոր էղած են; նոր կը վառին, որն օր օրթա են էղե՝ հասակավոր մարթիկներն են, էդոնք օր կը մլմլան՝ էդոնք էլ հոքին տվող մարթիկն են։

— Քավո՛ր հոքո՛ւդ մեռնիմ, աշե՝ իմ մոմս վե՞րն է, ըսե ինձի, օր տեսնամ իմ մոմս վերն է։

— Ի՞նչ պիտի ընես քու մոմդ,— ըսավ քավոր,— քելե էրթանք։

— Չէ՛,— ըսավ,— քավո՛ր իլե օր պիտի տեսնիմ իմ մոմս։

— Օր էդպես է իսե,— ըսավ քավոր,— քու մոմդ էն շամտանն է օր կը մլմլա։

— Քավո՛ր քու բախտդ եմ ընկե,— ըսավ սաներ,— իմ մոմս թաժացնես։

— Չէ՛, էդման չիլի, ես կրնա՞մ ասծու յուվեն ետ դառցնե, քել էրթանք։

— Չէ՛,— ըսավ սաներ,— քու օտներուդ մատաղ, պիտի թաժացնես, չթաժացնես իսե՝ դուա չեմ դա, իլա՛ պիտի թաժացնես։

Քավորն աշեց, էդորեն յախա չկրնա պոծցնե։

— Մեղքը քու ճիտ, էլ ես չեմ խառնվի։

Մոմը շամտընին դրեց, շամտընին դրեց քիմի՝ սաներն տեղոս տեղ ընկավ ու մեռավ։ Գափրել հրեշտակը էդոր հոգին առեց ու գնաց աստծու քովը։